

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԱՆԴԸ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՈՒՄ»
(«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ)**

1914 թ. հոկտեմբերի վերջին, երբ Առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ճակատում ռուսների և թուրքերի միջև ռազմական գործողությունները, փաստորեն, ծավալվում էին Արևմտյան Հայաստանի տարածքում, ստեղծվում է Մոսկվայի հայկական կոմիտե հասարակական կազմակերպությունը: Դրա նպատակն էր նպաստել պատերազմում ռուսական բանակի հաջողությանը, օգնություն ցուցաբերել Օսմանյան կայսրությունում ցեղասպանությունից մազապուրծ հայ գաղթականությանը, ռուս հասարակայնությանը ծանոթացնել հայ ժողովրդի պատմական անցյալին ու ներկային: 1915 թ. ապրիլի վերջին կոմիտեն նախա-տեսում է հրատարակության պատրաստել հայ պոեզիայի անթոլոգիա: Ընդառաջ գնալով կոմիտեի անդամների խնդրանքին՝ այդ տքնաջան գործի գլուխ է կանգնում ռուս նշանավոր բանաստեղծ և թարգմանիչ, պատմաբան ու գիտնական Վալերի Բրյուսովը:

Ինչպես հայտնի է, 1916 թ. օգոստոսի կեսին հայ և ռուս ընթերցող հասարակայնության սեղանին դրվեց Վ. Բրյուսովի «Հայաստանի պոեզիան» ժողովածուն: Եվ եթե ժողովածուի հրատարակչական-ֆինանսական մեծ ծախսերը հոգացել են մեծահարուստ հայեր, պակաս դժվարություն չէր վիճակված հայերեն տեքստերի ռուսերեն տողացի թարգմանությունները պատրաստողներին: Գաղափարի հղացման օրից ի վեր դրա ակտիվ մասնակիցներն են եղել գրական-մշակութային երախտավոր գործիչներ Կ. Միքայելյանը, Պ. Մակինցյանը, Վ. Տեր-յանը, Կ. Կուսիկյանն ու Ալ. Ծատուրյանը:

Ժողովածուի խորագրին կից նշված է՝ «Վալերի Բրյուսովի խմբագրությամբ», որը ժամանակի գրական-հեղինակային բարքերի գիտակ Բրյուսովը նաև նշում-շեշտում է առանձին հանձնարարականով. «I. Խմբագիրը ընթերցողներին. – II. Հրատարակության խնդիրները. – III. Աշխատանքի բաժանումը»՝ համառոտակի տեղեկատվությամբ և սույն ծանուցումով. «Ռուսերեն թարգմանությունների ընդհանուր խմբագրությունը կատարել է Վ. Յա. Բրյուսովը, որը մասնակցել է նաև թարգմանելու համար որոշված գործերի վերջնական ընտրությանը: Բացի այդ, Վ. Յա. Բրյուսովին առաջարկվել է գրել ժողովածուի Ներածական ակնարկը (հայ պոեզիայի պատմական ակնարկ)»¹: Ապա մեկ առ մեկ թվարկվում են այն

¹ Поэзия Армении с древнейших времен до наших дней (այսուհետև՝ Поэзия Армении). В переводе русских поэтов..., под ред., со вступ. очерком и примеч. В. Брюсова, М., 1916, с. 19.

մասերն ու հեղինակները, որոնք թարգմանել է անձամբ Բրյուսովը. այն է՝ ժողովրդական պոեզիա, միջնադարյան և աշուղական պոեզիա, նոր ժամանակների բանաստեղծներից էլ՝ առանձին էջեր: Ստեղծագործություններ՝ ընտրված որոշակի ճաշակով, բայց և խորհրդապաշտական ակնհայտ հակվածությամբ. ուշադիր հետևելու դեպքում դժվար չէ գգալ դրանց համարյա բոլորի շեշտված երաժշտականությունն ու գունագեղությունը՝ բնությունից քաղված խորհրդանիշներով:



«Հայաստանի պոեզիան» ժողովածուի տիտղոսաթերթը

Իբրև պատասխանատու խմբագիր, բնականաբար, անձամբ հենց ինքը՝ Բրյուսովն է ընտրել և մյուս թարգմանիչներին: Ինչպես երիտասարդ բանաստեղծ ու թարգմանիչ Ս. Շերվինսկուն, որին վիճակվեց Բրյուսովի կողքին թարգմանել Նահապետ Քուչակի իմաստուն ասացվածքները, ապա և նոր ժամանակների բանաստեղծներից՝ Ռ. Պատկանյանի, Ղ. Ալիշանի, Լ. Շանթի, Սիամանթոյի ու Դ. Վարուժանի գործերից ընտիր էջեր:

Իսկ ահա «Նոր պոեզիա»-ի արևելահայ-արևմտահայ ենթամասերում թարգմանիչները բազմաթիվ են: Եվ նրանցից էլ բոլորին չէ, որ հնարավոր է անդրադառնալ: Ուրեմն և

առաջինը նշենք Յու. Վեսելովսկուն՝ հիշարժան թարգմանությամբ՝ Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» և Ս. Շահագիզի «Երագ»-ը, նաև «Աշտարակ» ու «Լևոնի վիշտը» պոեմից հատվածներ: Դիպուկ ընտրություն թե՛ մեկի, թե՛ մյուսի թարգմանության ներկայացված շարքից. «Արաքսի արտասուքը» և «Երագ», որոնք, քնարական ժանրային ամենանորր՝ երգային ցուցանիշով, դասական հաստատուն տեղ ունեն հայոց բազմադարյան գրականության պատմության էջերում:



«Հայաստանի պոեզիան» ժողովածուի տիտղոսաթերթը

Թարգմանիչների խմբի նշանավորներից է Բ. Բունինը, որ թարգմանել է Ալ. Մատուրյանի «Հոգիս մռայլ...» և Ավ. Իսահակյանի «Եվ վաղո՞ւց, վաղո՞ւց խոր քուն է մըտած...» գործերը:

Անթռլոգիայի համար Կ. Բալմոնտը թարգմանել է Հովհ. Հովհաննիսյանից, Ալ. Ծատուրյանից, Հ. Թումանյանից, Վ. Տերյանից, Պ. Դուրյանից, Միպիլից մեկական բանաստեղծություն՝ հերթականորեն. «Տեսնում եմ ահա – ազգեր են մեռնում...», «Գետակ», «Համերգ» («Վտակը ժայռից ներքև է թռչում»), «Նաիրուհին», «Բմ ցավը», «Խունկը»:

Նկատելիորեն մեծ է թարգմանությունների թիվը Վ. Իվանովի պարագայում, որ ծայր է առել Հովհ. Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը» և «Այ՛ վարդ աղջիկ, մոտ արի՛...» բանաստեղծություններից: Ապա հաջորդում են Թումանյանից չորս բանաստեղծություն և «Անուշ» պոեմը՝ «Քնարական պոեմ VI երգով՝ նախաբանով և վերջաբանով» հանձնարարականով: Նկատենք՝ «Նոր պոեզիա»-ի «Ռուսահայերի պոեզիա» բաժնում Վ. Իվանովը, կարելի է ասել, երկրորդ տեղում է Բրյուսովից հետո: Նրան թարգմանական նկատելի բաժին է հասել նաև Ա. Բսահակյանի բանաստեղծություններից: Բայց, ինչպես հայտնի է, «Հայաստանի պոեզիա»-ում Բսահակյանի ստեղծագործության անգուղական թարգմանիչը Ա. Բրկն է՝ մեկը մեկից հատրնտիր նմուշներով, թվով 13-ը, որոնք ժանրային առումով նա վերնագրել է «Երգեր»: Հայտնի է, որ իր ժամանակին անտիպոեզիայով զբաղվող Ա. Իզմայիլովին գրած նամակում Բրկն հավաստում է, թե՛ «...ես չգիտեմ՝ թարգմանությունը (խոսքը «В долине, в долине Сално...» բանաստեղծության մասին է. – Ջ. Ա.) ինչքանով է հաջողվել, բայց բանաստեղծ Բսահակյանն առաջնակարգ է. թերևս, այժմ չկա այդպիսի անադարտ ու անմիջական տաղանդ ողջ Եվրոպայում»²:

Միով բանիվ, ժողովածուում ներկայացված են հայ պոեզիայից ընտրված ու թարգմանված 233 ստեղծագործություն, որոնք կատարել են ավելի քան 20 թարգմանիչ, և որոնցից շուրջ 10-ը ռուս հայտնի և տաղանդավոր բանաստեղծներ են: Ռուսերեն թարգմանված բանաստեղծություններից միայն 13-ն են մինչ այդ տպագրված եղել: 220 թարգմանություններից 142-ը պատկանում են Վ. Բրյուսովին:

Մեծածավալ ժողովածուն, ինչ խոսք, թերի կլիներ առանց ժողովրդի պատմության և պոեզիայի զարգացման ընթացքների տեղեկատվության ու բացատրության: Ըստ այդմ, խմբագրական ինչ-ինչ նկատառումների շարադրանքին հաջորդում է հետազոտական մեծ աշխատանքի արդյունք հանդիսացող «Հայաստանի պոեզիան և նրա միասնությունը դարերի ընթացքում» խորագիրը կրող Վ. Բրյուսովի հմտորեն շարակարգված պատմագրական ընդարձակ ակնարկ-առաջաբանը: Հարկ է նշել, որ ակնարկի ընթացքով նկատվում է հայ ժողովրդի պատմության, մշակույթի, պոեզիայի վրա ասիականի ու եվրոպականի՝ Արևելքի և Արևմուտքի, բրյուսովյան այս հայտնի սկզբունքի տեսության արտահայտության չարաշահումը: Գրականագիտությունը բազմիցս անդրադարձել է դրան և առարկել Վ. Բրյուսո-

² Блок А. Собрание сочинений в 6 томах, т. 6, Л., 1983, с. 260, 345-346.

վին³։ Ինչևէ, վերլուծելով հայ պոեզիայի զարգացման ընթացքը՝ ռուս բանաստեղծը շեշտում է, որ Հայաստանի պատմությունը նրա կյանքի ճանաչման աղբյուրն է։ «Անհրաժեշտ են համաշխարհային աղետներ, թուրքական կոտորածի անօրինակ սարսափներ կամ մի ողջ ազգի վայրի հալածանքը (ինչպես եղավ, օրինակ, ներկայիս մեծ պատերազմի սկզբին), որ մենք կրկին ուշադրություն դարձնենք «բազմաչարչար ժողովրդի» հետ կատարված աղետին։ Մենք՝ ռուսներս, ինչպես նաև ողջ Եվրոպան, հայերին հիշում ենք միայն այն ժամանակ, երբ օգնության ձեռք է պետք՝ փրկելու նրան սուլթանի գազազած հորդանների բնաջնջումից։ Մինչդեռ հայերը առավել մեծ իրավունք ունեն մեր և ողջ աշխարհի ուշադրությանը արժանանալու համար. դա այն բարձր մշակույթն է, որ հայ ժողովուրդը ստեղծել է իր ինքնուրույն գոյատևման բազում դարերի ընթացքում, և այն բացառիկ հարուստ գրականությունը, որ Հայաստանի ավանդն է մարդկության գանձարանում»⁴։

Հայոց բանաստեղծությունը համարելով ազգի «ազնվականության վկայական», հայ ժողովրդին էլ՝ «բանաստեղծ ժողովուրդ», Վ. Բրյուսովը շեշտում էր հայոց պոեզիայի համաշխարհային արժեքն ու ինչեղությունը, մի հանգամանք, որ գրականից բացի, իր ժամանակի համար հայտնի չափով ուներ նաև քաղաքական կարևորություն։ Ժողովածուի շապիկը

³ 1916 թ. հունվարյան այցելության ընթացքում Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Էջմիածնում, հայ պոեզիայի մասին Վ. Բրյուսովի կարդացած դասախոսություններում բրյուսովյան այս սկզբունքը, տեսությունը սուր քննադատության են ենթարկվել ժամանակի մամուլում (տե՛ս Պայքար, 17.I.1916: **Ղուկասյան Զ.**, Ռուս-հայ գրական կապերը նախառևոյոցիոն շրջանում, Ե., 1961, էջ 218: **Զաքարյան Ա.**, Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914-1920), Ե., 1984, էջ 69-71 և այլն)։ Այդ տեսությունն իր արտահայտությունն է գտել և «Հայաստանի պոեզիան» ժողովածուում։ Ի դեպ, ինչպես նշել է գրականագետ Խ. Սարգսյանը, այդ սկզբունքը ժամանակին ընդունել է և Ս. Նազարյանը (տե՛ս **Սարգսյան Խ.**, Մանուկ Աբեղյանը և հայ հին գրականության պատմությունը, Ե., 1946, էջ 32)։ Արևելք-Արևմուտք տեսության առումով նշենք, որ Խ. Սարգսյանը հակիրճ, բայց խորությամբ առարկելով Վ. Բրյուսովին, միաժամանակ գրել է. «Բայց մի բան անառարկելի է, մի բան աներկբա, որ իր մեծությամբ երկրորդական է դարձնում վերը հիշված բոլոր վիճելի կետերը։ Դա այն է, որ Բրյուսովը, մեծ ու բանիմաց վարպետի հմտությամբ կարողացավ գտնել հայ գրականության միանգամայն ինքնուրույն ու պատվավոր տեղը համաշխարհային գրականության զարգացման ուղիներում ու դրանով անհունորեն բարձրացնել նրա նշանակությունը։ ...Բրյուսովը առաջիններից է եղել, որ Խորենացու հայտնի ասացվածքը հայ ժողովրդի քանակով փոքր, բայց գործով մեծ լինելու մասին՝ «գործ» հասկացողությունը մեկնաբանել է ոչ միայն ռազմի դաշտում կատարած սխրության, այլև ոգու ասպարեզում կատարած մեծագործության իմաստով։ ...Իր սեփական արժանիքները ճանաչեցնելու մեջ է... Բրյուսովի մեծ ծառայությունը հայ ժողովրդին» (նույն տեղում, էջ 34-35, 38)։

⁴ Поэзия Армении, с. 6.

և ֆրոնտիսպիսը պատկերագարդարել են Վ. Սուրենյանցն ու Մ. Մարյանը՝ հայ մանրանկարչության օրինակով և ոճով:

«Հայաստանի պոեզիայի» լույս աշխարհ գալը արժանացավ հայկական և ռուսական մամուլի մեծ ուշադրությանը: Աչքի ընկնող համարյա բոլոր հայկական թերթերն ու ամսագրերը հանդես եկան գրախոսություններով, հաղորդումներով, դիտարկումներով ու նկատառումներով: Արձագանքեց նաև ռուսական մամուլը: Մասնավորապես, ժամանակի հեղինակավոր ամսագրերից մեկը՝ «Լետոպիսը», գրում էր. «Հայ բանաստեղծների թարգմանությունների փառահեղ և ստվար հատորը ոչ միայն խոշոր երևույթ է հայ բանաստեղծության, այլև մեծ տոն ռուս բանաստեղծության համար»⁵:

Ժողովածուի հրատարակությունից մինչև այսօր, տասնամյակներ շարունակ «Հայաստանի պոեզիան» շարունակում է մնալ գրական հասարակայնության, գրականագիտության ուշադրության կենտրոնում: Գրվել են մենագրություններ, բազմաթիվ հոդվածներ, շեշտվել ու շեշտվում է ժողովածուի թե՛ գիտական, թե՛ հասարակական – քաղաքական նշանակությունը: Մեծն Պ. Սևակը «Շնորհակալիքն ասենք մինչև վերջ» վերնագրով հոդվածում ժողովածուի պատմական առաքելության ու նշանակության մասին գրել է. «Հայաստանի պոեզիա»-ն, որ լույս տեսավ 1916-ին, մի սոսկական հատոր չէր, մեծադիր ու շքեղակազմ: Դա մեր ազնվության վկայականն էր՝ պարզված աշխարհի արյունոտ ղեմքին, անձնագիրը մի ժողովրդի, որ ապրելու իրավունքը ձեռք է բերել ոչ միայն մի դարավոր մաքառումով, այլև իր հոգևոր այն պաշարով, որ ներմուծել էր համաշխարհային քաղաքակրթության և մշակույթի մթերանոցը: Բրյուսովյան «Հայաստանի պոեզիա»-ն համաշխարհային առաջին պատերազմի թոհուրոհի մեջ պայթեց իբրև ռումբերի խուրձ:

Տարվելով հայոց քերթությամբ և ընդհանրապես հայոց պատմությամբ՝ Բրյուսովը թարգմանչի և խմբագրի իր սովորական դերից վերաճեց այնքան, որ դարձավ մեր դարավոր մշակույթի վերամկրտության կնքահայրը: Մեր բանաստեղծության համար արեց թերևս փոքր-ինչ ավելին, քան Ստրիժկովսկին (Ստրիժկովսկի – Ջ.Ա.)՝ մեր ճարտարապետության, Մառը՝ մեր հնագիտության համար»⁶:

«Հայաստանի պոեզիան», իրոք, «էպոխալն» գործ էր, այն նշանավորում էր ռուս և հայ մշակութային-գրական փոխադարձ կապերի ամրապնդման նոր, հիմնավոր շրջափուլ: Ժողովածուի վրա կատարած աշխատանքով Վ. Բրյուսովը գինվորագրվում է հայ դատի պաշտպանությանը, հայ ժողովրդի մշակույթի տարածման գործին, որին հավատարմորեն ծառայում է մինչև կյանքի վերջը:

ԶԱՔԱՐՅԱՆ Ա. Հ.

Բանասիրական գիտությունների դոկտոր

⁵ Летопись (Петроград), 1917, № 2, 3, 4, с. 428.

⁶ Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Ե., 1974, էջ 238-239: